**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«20» մայիսի 2026 թ.

N 71-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի մայիսի 15-ի N INS063-26, N INS064-26, N INS065-26, և N INS066-26 գրությունները.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 14-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 34-Ա հրամանի հավելվածը լրացնել 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Մայիսի 19-հունիսի 23 | 18.30 21.00 | «Շինարարական նյութերի ազգային ու միջազգային ստանդարտները և համապատասխանության գնահատման սխեմաները» | Բիյան Ծովինար | «Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5 | 1-ին կարգի մասնագետ՝ 12 կրեդիտ | 1-ին կարգի մասնագետ, | 1-ին կարգի մասնագետ՝ 48.000 |
| 6 | Մայիսի 23-26 | 18.30 21.00 | | | | 2-րդ կարգի մասնագետ՝ 7 կերդիտ, | 2-րդ կարգի մասնագետ, | 2-րդ կարգի մասնագետ՝ 28.000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | Մայիսի 27-հունիսի 5 | | | | | 3-րդ կարգի մասնագետ՝ 5 կրեդիտ | 3-րդ կարգի մասնագետ 01-31 մասնագիտություններ | 3-րդ կարգի մասնագետ՝ 20.000 |

»;

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի մայիսի 5-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 61-Ա հրամանի հավելվածը լրացնել 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Հունիսի 7 | 18.30-21.30 | «ISO ստանդարտները քաղաքաշինության բնագավառում» | Ծովինար Բիյան | «Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5 | 3 կրեդիտ | 1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագետ 01-34, մասնագիտություններ | անվճար |

»;

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի հուլիսի 18-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 111-Ա հրամանի հավելվածը լրացնել 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Հունիսի 9-10-ը | 16:30-21:30 | «Խելացի համակարգերը քաղաքային և արդյունաբերական միջավայրի զարգացման համար » | Կարեն Երզնկանյան, Նարեկ Մարգարյան, Բիյան Ծովինար | «Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5 | 10 կրեդիտ | 1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագետ 01-30, 34 մասնագիտություններ | 40.000 դրամ |

»;

4. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի հուլիսի 22-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և

կրեդիտների շնորհման մասին» N 115-Ա հրամանի հավելվածը լրացնել 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Հունիսի 5 | 16.30-21.30 | «ISO 9001 Որակի կառավարման համակարգեր. Պահանջներ, քաղաքաշինության բնագավառում որակի կառավարման համակարգի ներդրման առանձնահատկությունները» | Ծովինար Բիլյան | «Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5 | 5 կրեդիտ | 1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագետ 01-34, մասնագիտություններ | 20.000 ՀՀ դրամ |

»;

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սույն հրամանի մասին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Պարտականությունները կատարող՝

Ստորագրող
ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2102800415

2026-05-20 17:09:48 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ